

Պարսս յԱտրպատական՝ եթող զօրավար
ոմն Ռոստոմ հանդերձ զօրօք, եւ ետ նմա
հրաման ոչ պատերազմել ընդ բերդին, այլ
ի սէր համակել, զի հնազանդեսցին: Իսկ
Ռոստոմայ անխոյթ արարեալ զպատուէրն
Բարանայ՝ եւ տալ պատերազմ ընդ ամրա-
ցելոցն ի բերդին: Յայնժամ ապաւինեալ
բերդեցեացն ի զօրութիւնն Քրիստոսի, ըզ-
խաչս եւ զսրբոց նշխարս ընդդէմ բերեալ՝
ի հարուածս սաստիկս հարկանէին զպարս-
կական զունդն, եւ զերծեալ յայնմանէ
զՔրիստոս փառաւորէին զոհանալով զնր-
մանէ» (6):

Նման մանրամասնութիւն կու տայ նաեւ
Ստեփաննոս Օրբէլեան. «Ի ընուլ 176 թը-
ւականին Հայոց (պէտք է ըլլայ 276: Յ.
Ք. 827) ելանէ անիծեալ եւ աշխարհա-
ւերն Մրվան բազում զօրօք Տաճկաց ի
Հայս. եւ իրբեւ հուր սաստիկ այրեաց եւ
հրդեհեաց զգեղեցկութիւն աշխարհիս, ո-
րոյ անուն իսկ Աւարանչան ճանաչիւր: Եւ
բազում աւարան եկեալ ի Սիւնիս՝ ամրա-
նայ ի բերդագիւղն Շաղատու. եւ կամէր
զայն եւս ապականել զգեղեցիկ աշխարհն
Սիւական. եւ կուտեալ զզօրսն ի գաւառին
Ծղկաց ի նոին տեղւոջ: Ապա Վասակ՝
Սիւնեաց Տէր եւ իշխանաց իշխեցող, զնայ
փութանակի եւ ամէ զԳարան պարսիկ
բազում զօրու յԱտրպատականէ, եւ եհար
զՄրվան սաստիկպէս, եւ փախտական ա-
րար. բայց ինքն Վասակ ի նոին ամի վախ-
ճանի»:

« Եւ նոյնժամայն անուր Բարան ըզ-
դուստրն նորա ի կնութիւն իւր. եւ առ-
նէր ընդ ձեռամբ զգաւառն: . . . Յետ այսր
անհնազանդ եղեւ գաւառն Բաղասականայ
հրամանի եւ օրինաց Բարանայ, որոյ ե-
կեալ ձեռնտութեամբ Արլ-Ասաղայ Ազ-
վանեցոյ, կոտորեաց սաստիկ եւ անս-
զորմ զգաւառն Բաղասականայ, եւ մաշ-
եաց մինչեւ ի կանայս եւ մատաղ մանկը-
տիս. որք վասն անմեղ խողխողմանցն
պսակելոց ան ի Քրիստոսէ»:

«Իսկ ի դալ ամին զնայ Բարան ի գա-
ւառն Գեղարքունոյ եւ էարկ ի սուր սու-
սերի զբնակիչսն ոչիս իրբեւ 15·000, եւ
զյոզնապայծառ մենարանն եւ հոչակելի
ուխտն Մաքնոցաց յաւարի առեալ՝ զա-
մենայն ստացուածն այրեաց եւ քանդեաց
զամենայն շինուածն. բայց կրօնաւորքն
նախիմաց եղեալ եւ յերկուս բաժանեալ՝
զնայցին»: Օրբէլեան՝ Բարակի մասին
այսքան կը զրէ(7): Ոչ մէկ վկայութիւն
անոր վախճանին մասին:

Կաղանկատուացի եւ Օրբէլեան երկուքն
ալ կը վկայեն Բարակի Հայաստան ինչ-
պէս մտնելուն մասին, թէ եւ թուականի
անհամաձայնութեամբ: Գէպքերը կը սկը-
սին 821էն վերջ եւ 827էն առաջ: Մահմե-
տական ասպատակութիւն մը, զլիւսաորու-
թեամբ Սեւադայի աշխարհաւերն Տախիլ,
որոյ Աւարանչան անուն քանաչէր (Կա-
ղանկատուացի), կամ աշխարհաւերն Մըր-
վան բազում զօրօք Տախիլաց. . . որոյ ա-
նուն իսկ Աւարանչան քանաչիւր (Օրբէլ-
եան, ցոյց տալով որ վերջինս օգտուած է
առաջինէն: Յ. Ք.) կ'արչաւէ ի սահմանս
Հայոց (Կաղանկատուացի) եւ մեծ աւա-
րաւ կու դայ Սիւնիք եւ ամրանայ ի բեր-
դատեղի աւանին Շաղատու, որ է ի գա-
ւառնին Ծղկաց (Կաղանկատուացի), կամ
ամրանայ ի բերդագիւղն Շաղատու. . . ի
գաւառնին Ծղկաց (Օրբէլեան): Սեւաղա
Մրվան Աւարանչան հոն կը կեդրոնացնէ
իր ոյժերը, անկէ Սիւնիքն ալ աւարի եւ
աւերի մատնելու համար:

Այն ատեն Սիւնեաց տէրն էր Վասակ
Սիւնի (Տէր եւ իշխանաց իշխեցող՝ ըստ
Օրբէլեանի) որ գնայ փութանակի եւ ամէ
զԳարան պարսիկ բազում զօրու յԱտրպա-
տականէ (Օրբէլեան), կամ ամեալ զԳա-
րան ի Պարսից (Կաղանկատուացի): Ու-
րեմն Վասակ Սիւնի կը դիմէ Բարակին օչ-
նութեան՝ Մրվանայ դէմ, եւ ասիկա կ'ըլ-
լայ Բարակի առաջին մուտքը Սիւնիք եւ
Հայոց Աշխարհ:

(6) Թիֆլիս, 1913, էջ 374-377:

(7) Թիֆլիս, 1911, էջ 158-9: